վրայ իշխում էր մեծ պապը՝ գերդաստանի հայրապետը: Նայելով այդ ընտանիքին, ես մտաբերում էի մեր Հայկ նահապետի գերդաստանը, որ բաղկացած էր երեք հարիւր հոգուց: Այստեղ թէեւ այն թիւը չկար, բայց իր սպասաւորներով, աղախիններով եւ ընդոծիններով նրա երրորդ մասը անպատճառ կը լինէր:

Առանց հրաւիրելու, մեզ հետ ընթրիք ուտելու եկան այն բոլոր անձինքը, որ կտուրի վրայ ռեսի մօտ նստած էին: Դա մի առանձին պատիւ էր՝ թէ՛ դէպի մեզ եւ թէ՛ դէպի ռեսը, որ նրա հիւրերին միայնակ չէին թողնում: Սեղանը ճոխ էր եւ համադամ: Իւղը առատութեամբ ծփում էր կերակուրների երեսին: Եթէ կերակուրների բազմատեսակութիւնը եւ նրանց լաւ պատրաստութիւնը կարելի է կրթութեան եւ ճաշակի մի որոշ չափ համարել, այդ կէտից, զարմանալի էր տեսնել՝ այդ ստորերկրեայ բնակարանում այն տեսակ կերակուրներ: Ամէնքը սպասում էին քահանային, որ սեղանը օրհնէ եւ ապա սկսէին ուտել: Մեզ շրջապատող խոշոր երեւոյթների համեմատ, սեղանի վրայ եւս նշմարւում էր խոշորութիւն եւ մեծութիւն. պղնձեայ խոշոր պնակների մէջ ածած էին կերակուրները, փայտեայ խոշոր գդալներով ուտում էին խոշոր ժայռերի սրտում բնակողող խոշոր մարդիկը: Թէ՛ կերակուրները եւ թէ՛ հացը այնքան առատութեամբ դրուած էին սեղանի վրայ, որ, ինչպէս ասում են, ասեղ գցելու տեղ չէր մնացել: Այդ նրա համար էր, որ հիւրերը չամաչէին, չքաշուէին, որ ուտէին, որքան կամենում են, եւ դարձեալ մեծ մասը մնար սեղանի վրայ: Այդ ամօթը ոչ այնքան շատակեր հիւրին, որքան տան տիրոջը կը վերաբերէր, եթէ նրա սեղանի մի փոքրիկ մասն անգամ բացուէր: Սեղանը միշտ պէտք է ծածկուած մնար ուտելիքների տակ: Ոտքի վրայ՝ մեզ պատուելու համար՝ ծառայում էին տան հարսները, աղջիկները եւ պատանիները: Կատարեալ իրարանցում էր տիրում, երբ որեւիցէ պատուէր էին տալիս այդ ընտանեկան սպասաւորներին. նրանցից իւրաքանչիւրը շտապում էր, որ ինքը կատարէ հրամանը: Կանայք թէեւ մեզ հետ չէին խօսում, բայց, ուրիշ տեղերի հայ կանանց նման, երեսները չէին ծածկում: Աղջիկները ե՛ւ խօսում էին, ե՛ւ ծիծաղում էին: Ռեսի ընտանիքից, բացի նրա աւագ եղբայրներից, ոչ ոք սեղանի վրայ նստած չէր: Կրտսեր եղբայրները, ձեռքները կուրծքի վրայ խաչաձեւ դրած, անշարժ կանգնած էին եւ հրամանի էին սպասում: Կանանցից ոչ ոք սեղանակից չէր: Այդ սովորութիւնը պահպանւում է ոչ միայն այն ժամանակ, երբ սեղանի վրայ օտար հիւրեր կան, այլեւ իրանց ընտանեկան շրջանում կինը տղամարդի հետ միասին չէ ճաշում: Նախ ուտում են տղամարդիկ եւ ապա կանայք: Չնայելով, որ հիւրերի թիւը այնքան շատ էր, որ դահլիճի մի ծայրից մինչեւ միւսը բռնել էր, բայց դարձեալ նոր եւ նոր հիւրեր